ՍՐԲՈՒՀԻ ՄԱՐՏՈՅԱՆ
Տնտեսագիտություն,
բակալավրիատ, 3-րդ կուրս

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎՐԱ

Հիմնաբառեր. *կորոնավիրուս, տնտեսական աճ, ՀՆԱ-ի կառուցվածք, ճգնաժամ*

Կորոնավիրուսի տարածման պատճառով Հայաստանը կրեց հսկայական կորուստներ, ինչը պայմանավորված էր առաջին հերթին ՀՆԱ-ի խոցելի կառուցվածքով: Խնդիրն այն է, որ տնտեսական աճը մինչև 2020 թվականը գերազանցապես պայմանավորված էր ծառայությունների աճով՝ հիմնված մշակույթ, զվարճություններ, հանգիստ ենթաճյուղի վրա, իսկ պահանջարկի տեսանկյունից ՀՆԱ-ի կառուցվածքում մեծ է եղել սպառողական ծախսերի կշիռը՝ նվազող համախառն ներդրումների պայմաններում: Արդյունքում, անհրաժեշտություն է առաջանում մեծացնելու կապիտալ ծախսերը և դրանք ուղղելու հատկապես բարձր տեխնոլոգիական ոլորտներ:

Ներածություն: Խիստ փոխկապված ու ինտեգրված աշխարհում կորոնավիրուսի տարածումը և տնտեսական բացասական հետևանքները վրա հասան շատ արագ: Բազմաթիվ սահմանափակումների կիրառումը հանգեցրեց սպառման նվազման և արտադրական դադարների, որի հետևանքով հարյուր հազարների հասնող արդյունաբերական ձեռնարկություններ պարապուրդի մատնվեցին: Միլիոնավոր մարդիկ կորցրին իրենց եկամտի հիմնական աղբյուրը:

Աշխարհի երկրների տնտեսությունների վրա կորոնավիրուսի ազդեցության ալիքները տարբեր էին՝ պայմանավորված յուրաքանչյուր երկրի առանձնահատկություններով: Հայաստանի համար դա առավել բնութագրվում էր տնտեսության խոցելի ճյուղային կառուցվածքով: Չնայած 2019 թ. իրական ՀՆԱ-ի իրական աճի տեմպը եղել է բավականին բարձր՝ 7,6%[1], բայց տնտեսական աճը հիմնված է եղել ծառայությունների ոլորտի վրա՝ ըստ արտադրական ճյուղերի, և մասնավոր սպառումների վրա՝ ըստ ծախսային ուղղությունների: Այս երկու բաղադրիչների անկման հետևապատկերին ունեցանք սոցիալական և տնտեսական էական կորուստներ: Արդյունքում, անհրաժեշտություն առաջացավ վերազինելու մեր տնտեսությունը՝ ավելացնելով ներդրումների կշիռը և այն ուղղելով դեպի գիտելիքահեն ոլորտներ:

Գրականության ակնարկ: COVID-19, չնայած իր մեծածավալ բացասական ազդեցություններին, ախտորոշեց մեր տնտեսությունը և մատնանշեց հետագա զարգացման նախադրյալ հանդիսացող գործոնները՝ ներդրումները և տեղեկատվական տեխնոլոգիաները: Անկախ պետականության գոյության ընթացքում ՀՀ-ն ունեցել է 3 տնտեսական ճգնաժամ՝ 1991-1993 թթ., 2009 թ., 2020 թ.՝ յուրաքանչյուրն իրեն բնորոշ պատճառներով ու հետևանքներով[2]: Սակայն, պետք է նշել, որ 2004 թվականից ի վեր տնտեսության կառուցվածքը և տնտեսական աճի հիմնական աղբյուրները փոխվել են՝ հօգուտ շինարարության ու

---

[1] Տե՛ս ՀՆԱ-ի իրական աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ, 2019 թ., https://www.armstat.am/en/

[2] Տե՛ս «**Լույս» հիմնադրամ,** «Հայաստանում տնտեսական ճգնաժամերի համեմատական վերլուծությունը», Եր., 6 օգոստոսի 2020 թ., https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=176

ծառայությունների, ինչը ծանրացրել է 2009 թ. ճգնաժամը, և երկրի զարգացման այս մոդելը, որը գերակայություն է տալիս արտահանման առարկա չհանդիսացող ոլորտների զարգացմանը, շարունակել է պահպանվել հետագա տարիներին՝ դառնալով 2020 թ. տնտեսական ճգնաժամի խորացման «երաշխիք»:

Հայաստանի տնտեսության վրա կորոնավիրուսի ազդեցության ուղղությունների վերլուծություն է իրականացրել Օրբելի վերլուծական կենտրոնի հետազոտող-փորձագետ Տաթևիկ Առուստամյանը[1]՝ եզրակացնելով, որ այդ ուղղությունները տնտեսության մեջ կայուն և հիմնական աճ ապահովող ճյուղերն են (մշակող արդյունաբերությունը, մանրամեծածախ առևտուրը, մշակույթը, զվարճությունների և հանգստի ոլորտը), որոնց էլ ուղղված են եղել պետության՝ գործարար միջավայրի բարելավման և սոցիալական աջակցության ծրագրերը, և որոնց արդյունավետ կիրառման դեպքում երկարաժամկետում հնարավոր է ապահովել բազմագործոն տնտեսական աճ:

Հետաքրքիր անդրադարձ է կատարել տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Արմեն Ճուղուրյանը[2]՝ նշելով, որ եթե մինչ համավարակը Հայաստանից տեղի էր ունենում «կապիտալի փախուստ», ապա երկրների տնտեսական մեկուսացման պայմաններում հայկական կապիտալը կհանգրվանի հայրենիքում՝ խթանելով տեղական ներդրումները: Ինչ վերաբերում է պետության կանխարգելիչ դերին, ապա առաջնահերթ է համարել ներմուծման փոխարինման քաղաքականության իրականացումը՝ փոխարինող ապրանքների արտադրություններ հիմնելու և նոր աշխատատեղեր ստեղծելու ուղղությամբ, ինչը պետք է իրագործվի աստիճանաբար՝ մեղմելով ներկրումների պակասուրդային ռիսկերը: Երկրորդ՝ անհրաժեշտ է, որ պետությունը ներդրումների աղբյուր փնտրի հենց երկրի ներսում՝ վարելով նպատակասլաց հարկաբյուջետային քաղաքականություն:

Մեթոդաբանություն: Հաշվի առնելով համաշխարհային տնտեսության բազմաթիվ մարտահրավերները, մոլորակի բնակչության շարունակական աճի միտումները, այլ համաճարակների առաջացման հավանականությունը՝ սույն հետազոտական աշխատանքում ներկայացվել են այն մակրոտնտեսական ցուցանիշները, որոնք մեծապես իրենց վրա են կրում դրանց ազդեցությունները: Այս համատեքստում մատնանշվել են կայուն տնտեսական աճ ապահովող հիմնական գործոնները: Հետազոտության ընթացքում կիրառվել և զուգակցվել են համակարգային և իրավիճակային, վիճակագրական և գրաֆիկական վերլուծության, պատմական և տրամաբանական, արտածության և մակածության մեթոդները: Հոդվածի գիտական և տեղեկատվական հիմքը ոլորտի առանցքային աշխատություններն ու հետազոտություններն են, վիճակագրական շտեմարաններն ու զեկույցները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: Նախ քննարկենք համավարակի ուղղակի հետևանքները մեր տնտեսության վրա: Համաշխարհային շուկայում նավթի պահանջարկի կրճատումը և ՕՊԵԿ (+)-ի հրավիրած արտահերթ համաժողովի բանակցությունների ձախողումը հանգեցրին նավթի գների ռեկորդային նվազմանը (2020 թ. փետրվար-ապրիլ ժամանակահատվածում նավթի գներն ընկան 60%-ով[3]): Սա էապես ազդեց նավթարդյունահանող

---

[1] Տե՛ս «**Ամբերդ» տեղեկագիր,** «Կորոնավիրուսը և աշխարհը», 2020/1, Եր., էջ 81:

[2] Տե՛ս «**Ամբերդ» տեղեկագիր** 2020/2, Եր., էջ 38:

[3] Տե՛ս **International Monetary Fund**/World Economic outlook, October 2020, էջ 43, file://C:/Users/INTEL/Downloads/CSFOctober2020.pdf

երկրների տնտեսությունների վրա, ինչի հետևանքով ռուսական ռուբլին մարտի ընթացքում արժեզրկվեց մինչև 18%[1], ինչն էլ իր հերթին ազդեց Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արժույթների վարքագծի վրա. հայկական դրամը արժեզրկվեց 3,39%-ով[2], կրճատվեց Ռուսաստանից Հայաստան կատարվող մասնավոր տրանսֆերտների ծավալը, ՀՀ դրամի արժեզրկումը հանգեցրեց գնաճի: Այս առումով, արժե նշել, որ վերջին տարիներին Հայաստանը եղել է ցածր գնաճային միջավայր ունեցող երկրների ցանկում՝ 2016-2020 թթ. միջին տարեկան գնաճը կազմել է 1%[3]: 2020 թ. դեկտեմբերին 12-ամյա գնաճը կազմել է 3.7%[4], աճը շարունակվել է նաև 2021 թվականին: 2021 թ. ապրիլին 12-ամյա գնաճը հասավ 6.2%-ի (ինչն ամենաբարձր ցուցանիշն է 2013-ից հետո): Այսպիսով, գնաճը հիմնականում պայմանավորված էր.

1. ՀՀ դրամի արժեզրկմամբ՝ ՌԴ ռուբլու արժեզրկման հետևանքով,
2. արտաքին աշխարհում պարենային ապրանքների գների աճով,
3. կապիտալի արտահոսքով, որն ավելի խորացրեց ՀՀ դրամի արժեզրկումը, ինչն էլ իր հերթին հանգեցրեց գնաճի:

Սրան զուգահեռ, աճեցին կառավարության պարտքի տոկոսավճարները: Մասնավորապես, ՀՀ պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշը 2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 67.4%՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճելով 13.7 տոկոսային կետով[5], ինչը հիմնականում պայմանավորված է և՛ պետական պարտքի աճով՝ 18.6%, և՛ անվանական ՀՆԱ-ի 5.5% նվազմամբ: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ արտաքին պետական պարտքը բացարձակ արտահայտությամբ աճել է 391.8 մլրդ ՀՀ դրամով (274.9 մլն ԱՄՆ դոլարով) կամ 14.1%-ով: Այս ցուցանիշը (67,4%-ը) գերազանցել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված բոլոր թույլատրելի շեմերը (40%, 50% և 60%): Սա, իհարկե, պայմանավորված էր նաև Արցախյան պատերազմի առաջացրած ծանր հետևանքներով:

Այստեղ կարևոր է նշել հետևյալը. արտակարգ պայմաններում զարգացող երկրներն ամենամեծ վնասն են կրում, քանի որ կապիտալը փախչում է զարգացող շուկաներից՝ հանգեցնելով դևալվացիայի և ավելացնելով հին պարտքի արժեքը: Եթե զարգացած երկրները կարողանան գտնել պետական պարտքի ներգրավման աղբյուրներ, ապա զարգացողները կտուժեն բազմապատիկ անգամ:

Գործազրկության աճը, այս համատեքստում, պայմանավորված է և՛ համավարակի, և՛ Արցախյան պատերազմի բացասական ազդեցություններով: 2020 թ. ապրիլին աշխատատեղերի թվաքանակը կազմել է 547 հազար մարդ՝ նույն տարվա մարտ ամսվա նկատմամբ նվազելով 72,2 հազարով, իսկ նախորդ տարվա ապրիլի համեմատ՝ 47,4 հազարով (գծապատկեր 1): Զբաղվածության մակարդակը 2020 թ., 2019 թ. ցուցանիշի նկատմամբ, նվազել է -1.0 տոկոսային կետով՝ կազմելով 48.3%, իսկ գործազրկության մակարդակը աճել է 0.2 տոկոսային կետով՝ կազմելով 18.1%[6]:

---

[1] https://www.exchangerates.org.uk/USD-RUB-spot-exchange-rates-history-2020.html
[2] https://bankir.ru/
[3] https://armstat.am/am/
[4] Տե՛ս **ՀՀ ֆինանսների նախարարություն**/Պետական պարտքի մասին հաշվետվություն (2020 թ., տարեկան), էջ 5, https://www.minfin.am/hy/page/tarekan_hashvetvutyunner/
[5] Տե՛ս նույն տեղը, էջ 7, https://www.minfin.am/hy/page/tarekan_hashvetvutyunner/
[6] Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ՀՀ սոցիալ-տնտեսական զեկույց, «Կորոնավիրուսի և Արցախյան պատերազմի ազդեցություն», 2021, էջ 36, https://www.mineconomy.am/page/1248



Գծապատկեր 1. ***Ընդհանուր աշխատատեղերի թվաքանակի շարժընթացը, հազար աշխատատեղ***[1]

Այսպիսով, Հայաստանի ՀՆԱ-ն 2020 թ., 2019-ի համեմատ, նվազեց 7,4%-ով (գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ***ՀՆԱ-ի իրական աճի տեմպերը նախորդ տարվա նկատմամբ (%)***[2]

Մինչև համաճարակի բռնկումը Հայաստանի տնտեսական զարգացման ընդհանուր միտումը գնահատվում էր դրական՝ հաշվի առնելով տնտեսական աճի բարձր տեմպերը, արտահանման ծավալի կայուն աճը և գործազրկության ցուցանիշի նվազումը: Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության գնահատականների՝ համաճարակի և պատերազմի ագրեգացված բացասական ազդեցությունը կազմել է 14,0%-15,0% (կամ շուրջ 916,1 մլրդ ՀՀ դրամ՝ 2019 թ. գներով)[3]:

Փորձ է արվել ցույց տալու, որ սերտորեն միմյանց կապված այս ցուցանիշների փոփոխությունները՝ ՀՀ դրամի արժեզրկումը, գնաճը, պետական պարտքի ավելացումը, գործազրկությունը էնդոգեն (ելքային) են և արտակարգ իրավիճակներում դրանց մեծ կամ փոքր չափով շեղումը պայմանավորված է

[1] Տե՛ս նույն տեղը, էջ 37
[2] https://www.mineconomy.am/
[3] Տե՛ս նույն տեղը, էջ 46

տնտեսության թույլ հիմքերով, որը Հայաստանի դեպքում բնութագրվում է ՀՆԱ-ի խոցելի կառուցվածքով:

2020 թ. պատուհասած երկու ծանրագույն շոկերը վեր հանեցին տնտեսության թերի կողմերը: Թեև 2019 թ. իրական ՀՆԱ-ի աճի տեմպը եղել է բարձր՝ 7,6%, բայց այն կառուցված է եղել կարճաժամկետ գործոնների հիման վրա, որի պատճառով 2020 թ. անկումը բավականին խորն էր՝ -7,4%: Վերջինս առավելապես պայմանավորված է եղել ծառայությունների ոլորտի կրճատմամբ՝ -8,7% (գծապատկեր 3):



Գծապատկեր 3. ***Տնտեսության ճյուղերի նպաստումը ՀՆԱ-ի աճին, տոկոսային կետ***[1]

Խնդիրն այն է, որ մինչև 2020 թ. տնտեսական աճը հիմնված է եղել ծառայությունների ոլորտի վրա՝ ըստ արտադրական ճյուղերի (աղյուսակ 1), և այս ոլորտում հիմնական աճը գրանցում էր հատկապես «մշակույթ, զվարճություններ, հանգիստ» ենթաճյուղը, որի իրական աճը 2018 թվականին, նախորդ տարվա նկատմամբ, կազմել է 36,6%, իսկ շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեության աճը՝ 37,1%[2]: Այս թվերը պահպանվել են գրեթե նույն մակարդակում նաև 2019 թվականին: Շահումով խաղերի, վիճակախաղերի, խաղատների և նման այլ գործունեությունները մակրոմակարդակում հանգեցնում են եկամուտների վերաբաշխմանը ցածր եկամուտ ունեցողներից դեպի հարուստներ, ինչը խորացնում է աղքատությունը և սոցիալական անհավասարությունը: 2020 թ. համավարակն անմիջապես հարվածեց ծառայությունների ճյուղին, և այս կառուցվածքի պատճառով ճգնաժամին դիմակայելու ներուժը բավականաչափ թուլացավ: Համավարակի ազդեցությունը ծառայությունների ոլորտի վրա զգալի չի եղել հատկապես այն ուղղություններով, որոնք հիմնականում հենված են եղել տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահար հաղորդակցման միջոցների վրա:

---

[1] Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ՀՀ սոցիալ-տնտեսական զեկույց, Կորոնավիրուսի և Արցախյան պատերազմի ազդեցություն, 2021, էջ 26, https://www.mineconomy.am/page/1248

[2] Տե՛ս «Լույս» հիմնադրամ, Տնտեսական կոլապսի հավանականությունը ՀՀ-ում. մի՞ֆ, թե՞ իրական սպառնալիք, Եր., 9 հուլիսի 2021 թ., էջ 6, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=236

Աղյուսակ 1

Տնտեսության կառուցվածքը՝ ըստ արտադրական ճյուղերի և ըստ ծախսային ուղղությունների, 2019 թ., տոկոս ՀՆԱ-ում[1]

Ըստ արտադրական ճյուղերի		*Ըստ ծախսային ուղղությունների*	
Ծառայություններ	42,3	**Մասնավոր սպառում**	83,4
Արդյունաբերություն	18,6	**Պետական սպառում**	12,6
Առևտուր	11,7	**Ներդրումներ**	17,4
Գյուղատնտեսություն	11,5	**Արտահանում**	41,4
Շինարարություն	6,4	**Ներմուծում**	54,8

Այժմ դիտարկենք ՀՆԱ-ի կառուցվածքը՝ ըստ ծախսային ուղղությունների: 2019 թ. հատկապես մեծ է եղել սպառողական ծախսերի կշիռը (աղյուսակ 1): 2019 թ., 2018-ի համեմատ, համախառն ներդրումները կրճատվել են 14,3%-ով, իսկ վերջնական սպառումն աճել է 11,7%-ով, ընդ որում՝ ոչ թե եկամուտների, այլ վարկերի հաշվին (սպառողական և հիփոթեքային վարկերի ծավալները 2020 թ. վերջին, 2017-ի նկատմամբ, աճել են համապատասխանաբար 82 և 130%-ով)[2]: Բավականին ծանր վարկային բեռի առկայության պայմաններում տնտեսական ցնցումները մեծ հարված հասցրին բնակչության վարկային պարտավորությունների կատարման հնարավորություններին: Շարունակաբար աճող վարկեր/ՀՆԱ հարաբերակցության և չաճող եկամուտների պայմաններում չաշխատող վարկերի կշիռն աճեց:

Աղյուսակ 2

2020 թ. ճգնաժամի բնութագիրը՝ ըստ արտադրական ճյուղերի[3]

	Իրական աճի տեմպերը (նախորդ տարվա նկատմամբ, %)	*Նպաստումները (իրական ՀՆԱ-ի աճին, տոկոսային կետ)*
ՀՆԱ	-7,4	-7,4
Ծառայություններ	-8,7	-3,5
Առևտուր	-13,2	-1,5
Արդյունաբերություն	-1,5	-0,3
Շինարարություն	-6,7	-0,4
Գյուղատնտեսություն	-4,1	-0,5

Աղյուսակ 3

2020 թ. ճգնաժամի բնութագիրը՝ ըստ ծախսային ուղղությունների[4]

	Իրական աճի տեմպերը (նախորդ տարվա նկատմամբ, %)	*Նպաստումները (իրական ՀՆԱ-ի աճին, տոկոսային կետ)*
Վերջնական սպառում	-10,1	-9,7
Մասնավոր սպառում	-13,8	-11,6
Պետական սպառում	15,2	1,9
Ներդրումներ	-9,6	-1,7
Արտահանում	-32,4	-13,4
Ներմուծում	-31,7	17,4

[1] Տե՛ս ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021 թ. հունվար-մարտին, էջ 13 և 29 աղյուսակների տվյալների հիման վրա, https://armstat.am/file/article/sv_03_21a_112.pdf

[2] Տե՛ս «Լույս» հիմնադրամ, Տնտեսական կոլապսի հավանականությունը ՀՀ-ում. մի՞ֆ, թե՞ իրական սպառնալիք, Եր., 9 հուլիսի 2021 թ., էջ 7 և 17, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=236

[3] Տե՛ս նույն տեղը, էջ 23 (կառուցված է աղյուսակ 2.2 տվյալների հիման վրա):

[4] Տե՛ս նույն տեղը, էջ 24 (կառուցված է աղյուսակ 2.3 տվյալների հիման վրա):

Աղյուսակ 2-ից երևում է, որ իրական ՀՆԱ-ի անկմանը ամենաշատը նպաստել է ծառայությունների ոլորտի անկումը (8,7% անկման պայմաններում նպաստումը կազմել է 3,5 տոկոսային կետ): Սա նշանակում է, որ պետք է ծառայությունների ոլորտում շեշտը դնել կրթության ու տեղեկատվական տեխնոլոգիաների վրա՝ դա համարելով տնտեսության շարժիչ ուժը: Ինչպես վերևում նշեցինք, համավարակի ազդեցությունը զգալի չի եղել ՏՏ և հեռահար հաղորդակցման միջոցների վրա հենված ծառայությունների գծով, և զարմանալի չէ, որ բազմաթիվ զարգացած երկրներ ձգտում են իրենց ՀՆԱ-ի մեծ մասը ստանալ բարձր տեխնոլոգիական ոլորտներից, որտեղ աշխատուժն ավելի հեշտությամբ է անցնում հեռավար աշխատանքի: Մեզ համար՝ որպես պատերազմող երկրի, է՛լ ավելի է կարևորվում հատկապես տվյալագիտության և կիբեռանվտանգության ուղղվածությամբ աշխատատեղերի ստեղծումն ու որակյալ մասնագետների պատրաստումը:

Աղյուսակ 3-ից երևում է, որ ՀՆԱ-ի անկմանը արտահանումից հետո ամենաշատը նպաստել է մասնավոր սպառումը (13,8 տոկոս անկման պայմաններում 11,6 տոկոսային կետով): Սա նշանակում է, որ պետք է ավելացնել երկարաժամկետում կայուն տնտեսական աճ ապահովող և հավելյալ արժեք ստեղծող ծախսերը: Խոսքը վերաբերում է հատկապես կապիտալ ծախսերին, որոնք կարևոր են տնտեսության համար ամուր հիմքեր կառուցելու և գալիք մարտահրավերներին դիմակայելու տեսանկյունից:

Համավարակի սոցիալ-տնտեսական բացասական հետևանքների չեզոքացման նպատակով ՀՀ Կառավարության կողմից մշակվել և իրականացվել են 25 ծրագրեր, որոնցից 12-ը՝ տնտեսական և 13-ը՝ սոցիալական բնույթի: Տնտեսական հետևանքների չեզոքացման ծրագրերի օժանդակության ձևերն են՝ վարկի համաֆինանսավորում, վարկի վերաֆինանսավորում, տոկոսադրույքների սուբսիդավորում՝ որոշակի պայմաններով միանվագ դրամաշնորհների տրամադրման միջոցով: Միաժամանակ, ծրագրերի իրականացման նպատակով մշակվել և ընդունվել են մի շարք օրենսդրական և ենթաօրենսդրական իրավական ակտերի փոփոխություններ, որոնցով տնտեսավարող սուբյեկտների համար սահմանվել են ժամանակավոր արտոնություններ և հարկային վճարումների հետաձգումներ, ինչպես նաև աջակցություն է ցուցաբերվել առանձին սոցիալական խմբերին (թոշակառուներ, ուսանողներ և այլն):

Այսպիսով, ՀՀ պետական բյուջեի գումարներից 2020 թ. 80.8 մլրդ ՀՀ դրամ հատկացվել է կորոնավիրուսի համավարակի կանխարգելմանը, վերահսկմանը, բուժմանը և 133.7 մլրդ ՀՀ դրամ՝ ռազմական դրությամբ պայմանավորված ծախսերին[1]: Ընդհանուր առմամբ, վերոնշյալ միջոցառումները և դրանց իրականացման նպատակով մշակված օրենսդրական նախաձեռնությունների արդյունքները դրական են գնահատվել միջազգային կազմակերպությունների կողմից, բայց քանի որ ուղղված էին գլխավորապես հետևանքների վերացմանը, այլ ոչ թե պատճառների բացահայտմանն ու կանխարգելմանը, հիմնախնդիրները մնացել են անլուծելի:

Եզրակացություն: Ստեղծված համաճարակային իրավիճակում տնտեսության կառուցվածքի վերլուծության արդյունքում գալիս ենք այն եզրակացությանը, որ ՀՀ-ում տնտեսական աճը կառուցվածքային տեսանկյունից չունի ամուր հիմքեր:

---

[1] Տե՛ս ՀՀ էկոնոմիկայի նախարարություն/ՀՀ սոցիալ-տնտեսական զեկույց, Կորոնավիրուսի և Արցախյան պատերազմի ազդեցություն, 2021 թ, էջ 44, https://www.mineconomy.am/page/1248

Մինչև 2020 թ. տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է եղել ծառայությունների աճով, որն էլ իր հերթին հիմնված է եղել «մշակույթ, զվարճություններ, հանգիստ» ենթաճյուղի վրա: Այս ենթաճյուղը մակրոմակարդակում հանգեցնում է եկամուտների վերաբաշխմանը ցածր եկամուտ ունեցողներից դեպի հարուստներ, ինչը խորացնում է աղքատությունը և սոցիալական անհավասարությունը:

Պահանջարկի տեսանկյունից ՀՆԱ-ի կառուցվածքը նույնպես մտահոգիչ է, քանի որ դրանում մեծ է սպառողական ծախսերի կշիռը՝ նվազող համախառն ներդրումների պայմաններում, իսկ սպառումը ֆինանսավորվում է հիմնականում սպառողական վարկերի հաշվին: Սակայն, հաշվի առնելով այն, որ եկամուտները չեն աճում վարկերին համահունչ, սա կարող է առաջացնել անընդհատ աճող վարկերի սպասարկման հետ կապված խնդիր, ինչն էլ կհանգեցնի տնտեսական աճի կտրուկ անկմանը:

Տեղին է մեջբերել հանրահայտ արտահայտությունը. «Աշխարհում մարդիկ երկու կարգի են, բարեկա՛մս. զենքովներն ու փորողները»[1]:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո (2009 թ.) պետությունները բաժանվեցին երկու խմբի. զգալի ակտիվներ, ամուր արժույթի պահուստներ ունեցողները «զենքով» երկրներն են, իսկ տնտեսությունները, որոնք ունեն արտաքին հսկայական պարտքեր, ստիպված են «փորել»՝ հարուստ ընդերքը նրանց կփրկի: Բայց օգտակար հանածոներն անարդար են բաշխված, և մենք չգիտենք, թե ճգնաժամերն ինչպես կազդեն դրանց գների վրա, ապագայում որքան կավելանա բնական ռեսուրսներ մատակարարելու առաջարկը, վառելիքի անսահմանափակ շահագործումը կլիմայական ինչպիսի փոփոխությունների կհանգեցնի ու աշխարհի բնակչության աճի հետ մեկտեղ դեռ ինչպիսի համաճարակների և այլ բնական արհավիրքների կբախվենք: Թվարկվածներին հավելելով լարված ռազմաքաղաքական վիճակը՝ կարող ենք ասել, որ այսօր աշխարհն ավելի վտանգավոր ու անորոշ է, քան «սառը պատերազմի» տարիներին: Այս դեպքում ո՛չ զենքովներին և ո՛չ էլ փորողներին իրենց ֆինանսական ռեսուրսներն ու օգտակար հանածոները չեն փրկի: Այս համատեքստում հարկ է հիշել հետևյալը. 18-րդ դարում Մեծ Բրիտանիան, պատերազմելով Ֆրանսիայի դեմ, կուտակել էր շատ մեծ պետական պարտք, որը կազմում էր երկրի ՀՆԱ-ի 250%-ը: Կարճ ժամանակահատվածում պարտքը կրճատվեց՝ կազմելով ՀՆԱ-ի 25%-ը: Սրա գլխավոր «մեղավորը» արդյունաբերական հեղափոխությունն էր՝ երկաթուղու գյուտը:

Վերադառնալով հայաստանյան իրականություն՝ արձանագրենք. տեխնոլոգիական հրաշքներին սպասելը նմանվում է անհեթեթության, բայց ահա տնտեսությունը վերազինելը՝ բարելավելով ներդրումային միջավայրը, մեծացնելով կապիտալ ծախսերն ու դրանք ուղղելով հատկապես բարձր տեխնոլոգիական ոլորտներ, միայն մեր ձեռքերում է:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ՎԿ, ՀՆԱ-ի իրական աճի տեմպի, կառուցվածքի, գնաճի վերաբերյալ տվյալներ, https://www.armstat.am/en/
2. «Ամբերդ» տեղեկագիր, «Կորոնավիրուսը և աշխարհը», 2020/1, Եր.:
3. «Ամբերդ» տեղեկագիր, 2020/2, Եր.:
4. ՀՀ ֆինանսների նախարարություն, Պետական պարտքի մասին հաշվետվություն (2020 թ., տարեկան): https://www.minfin.am/hy/page/tarekan_hashvetvutyunner/

[1] Արտահայտությունը վերցված է **Նիլ Ֆերգյուսոնի** «Մեծ անկում. ինչպես են քայքայվում ինստիտուտներն ու կործանվում տնտեսությունները», գրքից, Եր., 2020, էջ 170:

5. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ սոցիալ-տնտեսական զեկույց, Կորոնա-վիրուսի և Արցախյան պատերազմի ազդեցություն, 2021, https://www.mineconomy.am/page/1248
6. «Լույս» հիմնադրամ «Հայաստանում տնտեսական ճգնաժամերի համեմատական վերլուծությունը», Եր., 2020, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=176
7. «Լույս» հիմնադրամ, Տնտեսական կոլապսի հավանականությունը ՀՀ-ում. մի՞ֆ, թե՞ իրական սպառնալիք, Եր. 2021, https://www.luys.am/index.php?m=publicationsOne&pid=236
8. Ֆերգյուսոն Ն., Մեծ անկում. ինչպես են քայքայվում ինստիտուտներն ու կործան-վում տնտեսությունները, Եր., 2020:
9. International Monetary Fund/ World Economic outlook, October 2020. file:///C:/Users/INTEL/Downloads/CSFOctober2020.pdf
10. https://www.exchangerates.org.uk/USD-RUB-spot-exchange-rates-history-2020.html
11. https://bankir.ru/

СРБУИ МАРТОЯН
Экономика, бакалавриат, 3-й курс

ВЛИЯНИЕ КОРОНАВИРУСА НА МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПОКАЗАТЕЛИ РА

Ключевые слова: *коронавирус, экономический рост, структура ВВП, кризис*

Из-за распространения коронавируса Армения понесла огромные убытки, что в первую очередь было вызвано уязвимой структурой ВВП. Проблема в том, что до 2020 г. экономический рост во многом был обусловлен ростом услуг, основанных на подсекторе "культура, развлечения, досуг", а с точки зрения спроса вес потребительских расходов в структуре ВВП был высоким в условиях снижения совокупных инвестиций. В результате возникает необходимость увеличения капитальных затрат и направления их главным образом в высокотехнологичные отрасли.

SRBUHI MARTOYAN
Economics, Bachelor's degree, 3rd Year

THE IMPACT OF CORONAVIRUS ON MACROECONOMIC INDICATORS OF THE REPUBLIC OF ARMENIA

Key words: *coronavirus, economic growth, structure of GDP, crisis*

Because of the coronavirus outbreak, Armenia suffered huge losses, which was primarily due to the vulnerable structure of GDP. The problem is that before 2020 Economic growth was largely driven by the growth of services based on the "culture, entertainment, leisure" sub-sector. Whereas from the demand side, the weight of consumer spending in the structure of GDP was high in the conditions of decreasing gross investments. As a result, there is a need to increase capital expenditures and direct them especially to high-tech sectors.